

ԼԵԶՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԺԽՏԱԿԱՆ ԽՈՆԱՐԻՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր – ժխտական խոնարհում, հարակատար, հրամայական եղանակ, հոգնակի թիվ, *է* խոնարհում, պարզ բայեր, հարկադրական եղանակ, *սյխոի* և *սյետք է* եղանակիչներ, *չ* ժխտական մասնիկ, կանոնարկում, վիճակագրություն, հանձնարարելի, տարբերակ

Ընդունված է ասել, որ ժխտական խոնարհումով ժխտվում, բացառվում է դրական խոնարհումով արտահայտված գործողությունը/եղելությունը: Ժխտական խոնարհումը, բնականաբար, ունի արտահայտության իր միջոցները: Դրանք *չ* և *մի* ժխտական մասնիկներն են: Առաջինը (ծագել է *ոչ* ժխտական մասնիկի՝ *ո-*ի անկումով) բաղադրում է բոլոր ժամանակաձևերը՝ բացառությամբ հրամայական եղանակի ժխտականի ձևերի: Վերջինս կազմվում է *մի* մասնիկի միջոցով և, ինչպես գիտենք, կոչվում է **արգելական հրամայական**: Բնականաբար, դրական խոնարհման կազմությունները անհամեմատ ավելի հաճախված կիրառություն ունեն բնագրերում և, առհասարակ, գրավոր ու բանավոր խոսքում, քան ժխտականները: Դրանց գործածության հաճախականության տարբերությունը, օրինակ, **Արևակ**-ում մուտքագրված բնագրերում¹ երբեմն հասնում է մի քանի տասնյակի՝ պայմանավորված տվյալ ժամանակաձևի գործածության հաճախականությամբ. քննարկվող որոշ ժամանակաձևեր նույն բնագրերում առանձին բայերի դեպքում ունեն զրո գործածություն: Բոլոր դեպքերում, բերված փաստերը և վիճակագրությունը որոշակի պատկերացում տալիս են գործող օրինաչափությունների և առավել տարածված կազմությունների մասին:

Տարակարծություններ և անհամաձայնություններ կան ժխտական խո-

¹ Մեր դիտարկումները և բերված վիճակագրությունը առավելապես հիմնված են **ԱՐԵՎԱԿ** (*Արևելահայերենի ազգային կորպուս*) էլեկտրոնային կայքում զետեղված բնագրերի լեզվական նյութի տվյալների վրա: **ԱՐԵՎԱԿ**-ը բաց էլեկտրոնային գրադարան է, արևելահայերեն տեքստերի «դիախրոնիկ կորպուս», որը ներառում է գրավոր և բանավոր նյութեր՝ մոտ 110 մլն բառամթերքով, ընդգրկում է հայ դասական գեղարվեստական ավելի քան 100 ստեղծագործություն՝ ստեղծված XIX դարի կեսերից մինչև մեր օրերը, ինչպես նաև գիտական և պարբերական մամուլից հրապարակումներ:

նարհման մի քանի կազմությունների վերաբերյալ: Դրանք են՝ հարակատար ներկայի եզակի երրորդ դեմքը, հարկադրականի ձևերը, **ե** խոնարհման պարզ բայերի հոգնակի արգելական հրամայականը:

Վերջինիս որոշ դրսևորումների անդրադարձել ենք¹ և այստեղ դրանց կանդրադառնանք ըստ անհրաժեշտության:

Հարակատար ներկայի եզակի երրորդ դեմք՝ գրված է > գրված չէ//չի գրված: Հայտնի է, որ հարակատարով կազմությունների՝ ժամանակային ձևեր լինելու վերաբերյալ չկա միասնական մոտեցում. լեզվաբանների մի մասի կարծիքով՝ մյուս անկախ դերբայների նման հարակատարը ևս **եմ** օժանդակ բայի հետ (**հարակատար + եմ** կաղապարով) բաղադրում է բարդ ստորոգյալ և չի կարող համարվել ժամանակաձև: Այլ լեզվաբանների կարծիքով՝ հարակատարը կազմում է ժամանակաձևեր՝ հարակատար ներկա և հարակատար անցյալ: Սակայն երկու դեպքում ժխտական խոնարհման նշված գուգաձության գոյության կամ կիրառության հարցը քննարկման առարկա է: Պարզապես մոտեցումները կարելի է բնութագրել հետևյալ կերպ. բոլոր այն լեզվաբանները, որոնք հակված են հարակատարով կազմությունները ժամանակաձևեր համարելու, հակված են նաև պաշտպանելու երկրորդ գուգահեռ ձևի (**չի + հարակատար**) գոյությունը: Մյուս տեսակետի պաշտպանները կամ չեն անդրադառնում հարցին, կամ մերժում են այդպիսի կազմության գոյությունը: Խնդիրը կամ, ավելի ստույգ, մոտեցման հիմունքը պարզ է: Այն լեզվաբանները, որոնք չեն ընդունում հարակատարի՝ ժամանակաձևեր կազմելու գաղափարը, իբրև փաստարկ են նշում քերականական մի շարք հատկանիշներ, որոնցից առանցքային են նաև հետևյալ երկուսը. ա) Բաղադրյալ ձևերի ժխտականը կազմելիս օժանդակ բայը գալիս է առաջ. նախադաս է, մինչդեռ հարակատարով կազմության դեպքում այդ փոփոխությունը սովորաբար չի լինում, ինչպես՝ հմմտ.՝ **գրում է – չի գրում**, բայց՝ **նստած է – նստած չէ**: բ) Բաղադրյալ ձևերի ժխտականի եզակի երրորդ դեմքի **է**-ն հնչունափոխվում է **ի**-ի. **չէ**-ն անպայման ունենում է **չի** ձևը, մինչդեռ հարակատարի դեպքում այդ փոփոխությունը չի լինում, ինչպես՝ հմմտ.՝ **գրում է – չի գրում**, բայց՝ **նստած է – նստած չէ**²:

Եղած կարծիքների և լեզվի փաստական նյութի ուսումնասիրությունը վեր է հանում փոքր-ինչ այլ պատկեր: Որոշ լեզվաբաններ, ինչպես ասվեց, հնարավոր են համարում նշված կառույցում օժանդակ բայի նախադաս և հնչունափոխված տարբերակի գործածությունը: «Հարակատարով կազմված ժամանակներում,– գրում է Ա. Մարգարյանը,– նրա հրամայական իմաստով պայմանավորված ժխտական օժանդակ բայը մեծ մասամբ հետո է դրվում, հմմտ. մոռացված եմ (ես, է) – **մոռացված չեմ** (չես, չէ), մոռացված ենք (եք, են)

¹ Տե՛ս **Ավետիսյան Յու.**, Տեղաշարժեր արդի գրական հայերենում, Երևան, 2011, էջ 41-45:

² Տե՛ս **Աղայան Է.**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ

– **մոռացված չենք** (չեք, չեն). նստած եմ – **նստած չեմ**, բայց նաև, ասենք, հրամանը **կատարված է** – հրամանը **չի կատարված**, ոչինչ **չի մոռացված** և այլն»¹: Հ. Բարսեղյանը, հարակատարով կազմությունները համարելով սահմանականի ժամանակաձևեր, արձանագրում է օժանդակ բայի միայն հետադաս դիրքով գործածություն՝ **քնած եմ – քնած չեմ, պառկած եմ – պառկած չեմ**: Այլ տարբերակ լեզվաբանը պարզապես չի քննարկում²: Է. Աղայանը հնարավոր է համարում հարակատար ներկայի եզակի երրորդ դեմքի **չի** և **չէ** զուգաձևերի գոյությունը³: Այդ իրողությունը սկզբունքորեն ընդունում է նաև Մ. Ասատրյանը⁴: Այլ հեղինակներ դրանք համարում են խոսակցական կամ բարբառային. «Հարակատար դերբայով կազմված ձևերում ճիշտ հակառակ պատկերն է. գրական են էական բայի ետադաս դիրքային տարբերակները. **քնած չեմ // չեմ քնած, կանգնած չեմ // չեմ կանգնած...** զուգաձևություններում երկրորդները բարբառային են կամ խոսակցական»⁵: Լեզվաբանների մի զգալի մասն էլ չի քննարկում հարցը, չի անդրադառնում հարակատարով ժխտականի նշված կազմություններին: Բոլոր դեպքերում ակնհայտ է մի բան. նշված զուգաձևությունները կան: Հարցն այն է, թե գործածական ինչ հաճախականություն ունեն «բարբառային» կամ «խոսակցական» համարված տարբերակները, և թե որքանով են համոզիչ այդ բնութագրումները քննարկվող տարբերակների վերաբերմամբ: Եվ վերջապես, այս երևույթի վերաբերյալ ինչպիսի՞ զարգացումներ ու տեղաշարժեր են արձանագրվում արդի արևելահայերենի կենդանի բանավոր և գրավոր խոսքում:

Հարակատար + եմ կառույցը բաղադրող բայերից մեր դիտարկումներով առավել ակտիվ են կրավորական սեռի բայերը (ի տարբերություն վիճակ ցույց տվող չեզոք սեռի բայերի): Անհամեմատ ավելի գործածական են դրական խոնարհման ձևերը. տարբերությունը հասնում է մեկ տասնյակի կամ ավելիի: Այսպես՝ **նշել** բայի **նշված** դերբայական ձևը դրական խոնարհմամբ (օժանդակ բայի դրական ձևերի հետ՝ **նշված է**) գործածվել է 3.285 համատեքստում 1.974 անգամ, իսկ ժխտական խոնարհմամբ (օժանդակ բայի ժխտական ձևերի հետ՝ **նշված չէ**)՝ 220 համատեքստում 178 անգամ; **զարմացած է**՝ 157/141 – **զարմացած չէ**՝ 10/3; **նստած է**՝ 1.685/700 – **նստած չէ**՝ 16/14:

Ժխտական կազմություններում, ինչպես և ենթադրվում էր, առավել գործածական է օժանդակ բայի հետադաս դիրքով կազմությունը՝ **նստած չէ**,

¹ Մարգարյան Ա., Հայոց լեզվի քերականություն. ձևաբանություն, Երևան, 2004, էջ 484:

² Տե՛ս Բարսեղյան Հ., Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953, էջ 317:

³ Տե՛ս Աղայան Է., նշվ. աշխ., էջ 354:

⁴ Տե՛ս Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Բ, Երևան, 1973, էջ 330:

⁵ Աղաջանյան Զ., Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Երևան, 2007, էջ 302:

գրված չէ, ասված չէ նն: Մյուս երկուսի՝ **չէ/չի** ժխտական ձևերի նախադաս կիրառություններում անհամեմատ ակտիվ են **չի**-ով ձևերը: Ունենք այսպիսի պատկեր **չէ նշված՝ 0/0 – չի նշված՝ 73/70; չի գրված՝ 83/68 – չէ գրված՝ 7/4; չի բերված՝ 22/20 – չէ բերված՝ 4/2; չի նստած՝ 18/16 – չէ նստած՝ 7/1**¹:

Ահա **Արևակ**-ից քաղված բնագրային օրինակներ՝ նշված կազմություններով՝

ա) (**չի + հարակատար**)՝ «...և այդ գյուղն էլ բացի ռազմական քարտեզներից ոչ մի տեղ **չի նշված, չի նշված** նաև, որ այդ փոքրիկ օրորոցը փրկելու համար...» (Մ. Մարգարյան); Պարոն Գարթայան, պոլիսների գումարները նշված չեն, սա անհարմարություն է ստեղծում, ինչո՞ւ չափը **չի նշված**, գուցե այնքան փոքր է, որ չարժե դիմել, բա չիմանա՞նք («Ազգ», 2007): «Եթե **չի նշված**, թե ում համար է տրված, համարվում է, որ ավալը տրված է չեկ տվողի համար» (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1999); «Դրույքաչափերը գործակիցներով բազային տուրքի նկատմամբ (եթե այլ բան **չի նշված**)» (ՀՀ օրենքը պետական տուրքի մասին, 1998); «Ես գործեր չունեմ, ես չեմ կարող հավատալ», մինչդեռ, ո՛չ մի տեղ **չի** ասված այդ բանը» (Լև Տոլստոյ, 1979); «Բայց գրեթե **չի** ասված, որ գերմանացի հասարակ ժողովուրդը հիմնականում չի մասնակցել Հոլոքոսթին...» («Ազգ», 2005); «Պատահական **չի** ասված, որ նորն ընդամենը լավ հինն է» («Նաիրի», 1983):

բ) (**չէ + հարակատար**)՝ «Նա շատ անգամ սայթաքում է, ընկնում է, որովհետև իր սեփական ոտների վրա է քայլում, վարձկան ձի **չէ նստած**» (Րաֆֆի); «...որ լեհուհի մասնակցողի համար ծաղկեփունջ **չէ բերված** (Վրթանես Փափագյան); «Եվ չի կարելի ասել, որ բոլոր ժամանակների համար ճշմարիտ **չէ** ասված, «երբ մարդ չի քայլում իր ժամանակի հետ, առաջ սլացող մարդկանց ոտի տակ արգելք է դառնում և կոխկրտվում է»» (Վահրամ Փափագյան); «— Նյութական կուլտուրայի վերելքն ավելի վաղ **չէ** կատարված, քան գրական կուլտուրայինը,— հակաճառեց պրոֆեսորը» (Վահրամ Փափագյան); «Ո՛չ, վատ իմաստով **չէ** ասված, երանի մենք էլ մեր փոքրիկ հայրենիքն ունենայինք...» (Ալիկ Թոփչյան); «...այդ ինձ համար **չէ** ասված, եթե այդպես բան պատահելու լինի ինձ հետ, դա առաջին

¹ **Արևակ**-ի բնագրերում հանդիպում են «կառույցներ», որոնք նույնականանում են մեզ հետաքրքրող կազմությունների հետ, սակայն դրանք ձևային պատահական համընկնումներ են և, բնականաբար, որևէ կերպ չեն կարող դիտարկվել հարցի քննարկումներում: Օրինակ՝ «... այդ ապրանքային նշանը կամ տեղանունն իրականում գրանցված **չէ նշված** երկրում»; «... եթե նույնիսկ համաձայն **չէ նշված** խախտումների հետ»; «հատակը արդեն պիտանի **չէ նշված** շենքերի և ուրիշ շատ շենքերի բնակիչները...»; «... բավարար **չէ նշված** հարաբերությունների լիարժեք իրավական կարգավորումն ապահովելու համար»; «Գառնիկ – Չէ, չէ, չէ, **չէ**, նստած եմ»; «**Չէ**, նստած ես արդեն երաժշտության տակ»; «**Չէ**, նստած էինք բժշկի մոտ»; «... թե իբր ծանոթ **չէ** բերված փաստերին»; «Գռեհիկ նատուրալիզմ **չէ** բերված օրինակը» նն (2000-2006 թթ. պարբերական մամուլ՝ «Առավոտ», «Հայկական ժամանակ», «Գրական թերթ», օրենսգրքեր նն):

անհաջողությունը կլինի իմ ամբողջ կյանքում» (Մուրացան): «Արթուն եղեք» պատգամը կոնկրետ իրավիճակի համար **չէ** ասված միայն» («Ազգ», 2004):

Բերված օրինակները և բնագրային-փաստական նյութը ասում են հետևյալը. իհարկե, քննարկվող կառույցի կանոնական տարբերակը (**դերբայ + չէ**) ամենից գործածականն է և օրինաչափ կիրառություն ունի գրավար ու բանավոր գրական լեզվում: Մակայն, և՛ գրավոր, և՛ բանավոր լեզվում գործածվում են նաև քննարկվող մյուս երկու տարբերակները (**չի + դերբայ/չէ + դերբայ**): Երկրորդ կազմությունը (**չէ + դերբայ**) նոր ժամանակներում կենսունակ չէ և առավելապես հանդիպում է վաղ շրջանի հեղինակների գործերում կամ արևմտահայերեն բնագրերում ու թարգմանություններում: Կարելի է ասել, որ դրանք հնացած կամ հնացող կազմություններ են և այսօր, բնականաբար, միտում չունեն կանոնական դառնալու: Առաջին կազմությունը (**չի + դերբայ**) համեմատաբար ակտիվ կիրառություն ունի, առանձին ոճերում և շատ գործածական բառերի դեպքում դրսևորում է զգալի ակտիվություն, նույնիսկ երբեմն գերազանցում է ընդունված կանոնական կազմության գործածությունները: Օրինակ՝ **բերել** բայի դեպքում վիճակագրությունը այսպիսին է. **բերված չէ՝ 15/15 – չի բերված՝ 22/20, ասել** բայի կրավորական ձևի դեպքում ունենք՝ **ասված չէ՝ 58/50 – չի ասված՝ 102/93**¹:

Կարծում ենք՝ սխալված չենք լինի, եթե բերված փաստերի հիման վրա պնդենք, որ **հարակատար + եմ** կառույցում ժխտական խոնարհման դեպքում օժանդակ բայի եզակի երրորդ դեմքում խոնարհված ձևով նախադաս կիրառությունը (**չի + հարակատար**), այնուամենայնիվ, ունի գոյության իրավունք. այն պետք է ընդունել որպես զուգահեռ կանոնական տարբերակ արդի գրական արևելահայերենում:

Ե խոնարհման պարզ բայերի անցյալի հիմքով կազմված արգելական հրամայականի հոգնակի թիվը՝ մի՛ գրեցեք²: Լեզվի տեսության մեջ այս կազմության գոյությունը սկզբունքորեն չի մերժվում, սակայն տարբեր են դրա գործածականության վերաբերյալ գնահատականները: Հայտնի է, որ արևելահայերենում **ե** խոնարհման պարզ բայերի հոգնակի հրամայականի համար խոսակցական լեզվի ազդեցությամբ ձևավորվեց ներկայի հիմքից կազմություն (**գր+եք, խոս+եք**), որը գնալով հաստատվեց գրական լեզվում՝ որպես կանոնական ձև՝ գործառվող ցոյական հիմքով կազմությանը

¹ **Չէ ասված** տարբերակը հաճախ հանդիպում է քարացած կառույցներում՝ **գուր չէ ասված, իգուր չէ ասված** կապակցությունների ձևով, ինչպես՝ «**Իգուր չէ** ասված, պոռնիկ է բախտը. Կպառկի միայն հարուստի տակը» (Վահրամ Փափագյան); «– Ախր **իգուր չէ** ասված՝ «... տասնմեկ տարեկան և այսքան խիզախ ու այսքան մարդկային, ազգին պատիվ է, որ ան չլինեք, ոչ ես, ո՛չ ալ Փեփրոնեն...»» (Հմայակ Միրաս): «Եվ **գուր չէ** ասված՝ «Օջախը եկվորով է հարուստ, եկվորով՝ օրհնյալ...»» (Զանգեզուր, 1986); «... **իգուր չէ** ասված՝ մինչև ճկուն փայտ չլինի՝ ոչ եզր, ոչ էլ էջը հրամանը չեն լսի» (Գարեգին Սևունց) են:

² Շարադրանքի կետադրությունը չճանաբեռնելու համար այսուհետև հրամայականի ձևերի վրա շեշտ չի դրվի:

(**գր+եց+եք, խոս+եց+եք**) զուգահեռ (արևմտահայերենում նույն կազմության պարզ բայերը ունեն հոգնակի հրամայականի մեկ ձև՝ կազմված ցոյական հիմքով՝ **գրեցեք, ներկեցեք, երգեցեք**)¹: Արգելական հրամայականի համար վերջին տասնամյակներին հաստատված նորմը հետևյալն է. արգելական հրամայականը կազմվում է՝ բոլոր կազմության բայերի դրական ձևին ավելացնելով **մի** արգելական մասնիկը՝ **գրիր – մի գրիր, թռիր – մի թռիր, մոտեցիր – մի մոտեցիր, խոսեցրու – մի խոսեցրու** ևն: Նույն կանոնը գործում է նաև հոգնակի թվում՝ **կարդացեք – մի կարդացեք, թռեք – մի թռեք, մոտեցեք – մի մոտեցեք, խոսեցրեք – մի խոսեցրեք** ևն: Բայց ահա **ե** խոնարհման պարզ բայերի արգելական հոգնակին կազմելիս, վերը նշված զարգացումով պայմանավորված, ունենում ենք զուգաձևություններ՝ **գրեք – մի գրեք//գրեցեք – մի գրեցեք**:

Ժխտական խոնարհման հարացույցի մասին խոսելիս Մ. Աբեղյանը որպես արգելական հոգնակիի կազմության ընդունված տարբերակ պարզապես նշում է **մի գրեք** ձևը: Այլ տարբերակ չի քննարկվում²: Է. Աղայանը «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» գրքում թեև հատուկ չի անդրադառնում հարցին, սակայն արգելական հրամայականի, այսպես կոչված, «երկու ձևերի» մասին խոսելիս որպես կանոնական ձև է նշում հրամայականի դրական ձևից բաղադրված **մի գրեցեք** տարբերակը: Ներկայի հիմքից կազմության (**մի գրեք**) մասին որևէ նշում չկա³: Իր բուհական ձեռնարկում Մ. Ասատրյանը սովորական է համարում **մի գրեցեք** կազմությունը, իսկ **մի գրեք**-ը նշում է փակագծում՝ որպես զուգահեռ հնարավոր տարբերակ, այսպես՝ **մի գրեցեք (մի գրեք)**: Ըստ որում, ձևերը հարացույցում տրվում են առանց որևէ մեկնաբանության⁴: Ժամանակակից արևելահայերենի խոսակցական տարբերակի ուսումնասիրողների բնութագրությունից պարզ է դառնում, որ **մի գրեցեք**-ը դրական ձևի համաբանությամբ առաջացած «քիչ գործածական զուգահեռ է», և խոսակցական լեզվում սովորական է

¹ Ե խոնարհման պարզ բայերի վերաբերյալ մեր բոլոր դիտարկումները վերաբերում են նաև կրավորական և բազմապատկական բայերին, քանի որ վերջինները գրական արևելահայերենում ձևակազմության մեջ դրսևորում են քերականական նույն վարքագիծը: Դրանց առանձնաբար չենք անդրադառնում շարադրանքը չձանրաբեռնելու համար:

² Տե՛ս **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 329:

³ Տե՛ս **Աղայան Է.**, նշվ. աշխ., էջ 368: Որպեսզի Է. Աղայանի մոտեցումը ավելի ընկալելի լինի, ավելացնենք նաև, որ տասնամյակներ առաջ գրված այդ աշխատանքում լեզվաբանը արգելական հրամայականի ընդունելի տարբերակներ է համարել նաև «ժխտական դերբայի ու նախադաս արգելական մասնիկի հարադրությամբ» կազմված ձևերը՝ **մի կարդար, մի մոռանա, մի տեսնի, մի սովորեցնի, միք գրի, միք սովորեցնի** ևն: Ավելին, նշվում է, որ դրանք ունեն ընդհանրանալու միտում (տե՛ս նույն տեղում): Մինչդեռ գրական լեզվի նորմի տեսանկյունից դրանք այսօր համարվում են հնացած և գործածությունից դուրս եկած կազմություններ:

⁴ Տե՛ս **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1983, էջ 355:

մի գրեք կարճ տարբերակը¹: Հայոց լեզվի ակադեմիական հրատարակության հեղինակները **ե** խոնարհման պարզ բայերի համար արգելականի հոգնակի թվի ընդունելի ձև են համարում միայն ներկայի հիմքով կազմությունը **գրեք – մի գրեք, վագեք – մի վագեք, խմեք – մի խմեք**: Հետաքրքիր է, որ որևէ բացատրություն չկա ցոյական հիմքով կազմության մասին, թեև արգելական հրամայական այլևայլ ձևերի (այդ թվում նաև հնացած ու անգործածական) մասին հանգամանորեն խոսվում է²: Ա. Մարգարյանը որպես դրական գուգաձևությունների (**գրեք//գրեցեք**) արգելական տարբերակ է նշում միայն ներկայի հիմքով կազմությունները՝ **մի գրեք, մի նստեք, մի գրվեք, մի շարժվեք** ևն³:

Իսկ ի՞նչ ունենք վիճակագրությամբ: Ըստ **Արևակ**-ի տվյալների՝ տարաբնույթ տեքստերում գործածության անհամեմատ մեծ հաճախականություն ունի ներկայի հիմքով կազմությամբ արգելականը՝ **մի գրեք**՝ 51/30 – **մի գրեցեք**՝ 0/0; **մի խոսեք**՝ 183/126 – **մի խոսեցեք**՝ 2/2; **մի երգեք**՝ 7/7 – **մի երգեցեք**՝ 0/0; **մի հիշեք**՝ 12/11 – **մի հիշեցեք**՝ 1/1; **մի նստեք**՝ 22/20 – **մի նստեցեք**՝ 2/2: Ըստ որում, ցոյական հիմքով կազմությունները գործածված են առավելապես ոչ ժամանակակից հեղինակների գործերում՝ «Դե՛հ, տղե՛ք, **մի՛** խոսեցեք, մե՛ դք է» (Բաֆֆի); «Նրանց մոտ ոչինչ **մի** խոսեցեք (Բաֆֆի)»:

Առանձին լեզվաբանների կողմից հանձնարարվող կամ նախընտրելի համարվող կազմությունը փաստորեն աստիճանաբար դուրս է մղվում գրական լեզվից: Եվ գրավոր խոսքում գործածական կանոնական կազմություն է ամրագրվում **ե** խոնարհման պարզ բայերի ներկայի հիմքով արգելական հրամայականը՝ **մի գրեք, մի աղմկեք, մի խոսեք, մի հիշեք, մի նստեք** ևն⁴: Բայց դա բնավ հիմք չի տալիս ցոյական հիմքով կազմությունը համարելու սխալ կամ անկանոն: Ժամանակակից հայերենի արգելական հրամայականի հոգնակի թվի հարացույցում դրանք պետք է ամրագրվեն որպես տարբերակային ձևեր՝ իհարկե, հանձնարարելի և նախընտրելի համարելով ներկայի հիմքով կազմությունները:

Հարկադրական եղանակի ժխտական խոնարհում: Այս բայաձևի կազմության վերաբերյալ և՛ նորմատիվ քերականության գրքերում, և՛ գի-

¹ «Ժամանակակից հայերեն. խոսակցական լեզուն», Երևան, 1981, էջ 95:

² Տե՛ս **Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ.**, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Երևան, 1974, էջ 417:

³ Տե՛ս **Մարգարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 485:

⁴ Հետաքրքիր է, որ առանձին բայերի դեպքում արձանագրվում է ցոյական հիմքով կազմությունների որոշ ակտիվություն: Օրինակ՝ **նայել** բայի համար ունենք հետևյալ պատկերը՝ **մի նայեցեք**՝ 21/17 – **մի՛ նայեք**՝ 221/147: Դրանք, սակայն, առավելապես հանդիպում են XX դարավերջի թարգմանական գրականության մեջ՝ «Դուք **մի** նայեցեք, թե ինչպիսի մարդիկ է նա ընտրում...» (Ալեքսանդր Ֆադեև); «Հապա **մի** նայեցեք իմ ժամացույցին, ժամը քանիսն է» (Թեոդոր Դրայդեր); «...**մի** նայեցեք, մեր հետևակներն արդեն հասան այնտեղ» (Լև Տոլստոյ) ևն:

տական գրականության մեջ դարձյալ կան տարակարծություններ: «Ժամանակակից հայերեն. խոսակցական լեզու» գրքի հեղինակները հարկադրական եղանակի ժխտական ձևերում արձանագրում են զուգահեռ կազմություններ: Հանձնարարվող և կանոնական է համարվում եղանակիչի ժխտական ձևով կազմությունը՝ **չպիտի կարդամ, չպետք է խոսեմ** ևն: Բայց և միաժամանակ այն վատահամոզումն է արտահայտվում, որ բնորոշ լինելով խոսակցական լեզվին՝ բայաձևի վրա դրված չ մասնիկով կազմությունները գնալով դառնում են գործածական. ասել է թե՛ գրական լեզվում ընդունելի կարելի է համարել երկու կազմություններն էլ: Ըստ որում, փորձ է արվում նաև նրբիմաստային տարբերություններ տեսնել դրանցում. ըստ այդմ՝ իբրև թե եղանակիչի ժխտումով կազմությունները ավելի շեշտողաբար են արտահայտում ժխտումի իմաստը¹: Հ. Բարսեղյանը նույնպես այս զուգահեռ ձևերի մեջ տեսնում է իմաստային զանազանություն. բայաձևի վրա ավելացված կազմության մասին նա գրում է. «Բայց այս ձևում բացասվում է գործողությունը և վերցվում է բացասված գործողության անհրաժեշտությունը: **Պիտի չխմեմ** նշանակում է՝ **ինձ չիմեղ է պետք**: Իսկ **չպիտի խմեմ** նշանակում է՝ **խմել պետք չէ**, ուր ժխտվում, բացասվում է գործողության պետքը, հարկը»²: Բոլոր դեպքերում, գրական լեզվի համար լեզվաբանը ընդունելի է համարում չ մասնիկի գործածությունը եղանակիչի հետ, որովհետև, ըստ նրա, «այստեղ խոսքը վերաբերում է գործողության հարկադրաբար, անհրաժեշտաբար կատարելու հաստատմանը կամ մերժմանը և ոչ թե մերժված գործողության անհրաժեշտության հաստատմանը, որն ըստ էության դառնում է մի դրական ձև»³: Գարելի է և համաձայնել լեզվաբանի այս դիտարկումներին և մեծ ջանք գործադրելու դեպքում այդպիսի տարբերակված նրբիմաստներ նշմարել զուգաձևերում, օրինակ՝ «Նա չպետք է սովորի» նախադասությունը հասկանալ *նրան սովորել պետք չէ* իմաստով, իսկ «Նա պետք է չսովորի»-ն՝ հասկանալ *նրան չսովորել է պետք*: Բայց, բոլոր դեպքերում, սովորական լեզվակիրառողը **նախ**՝ հազիվ թե հակված լինի նման նրբիմաստներ պեղելու զուգաձևերում, և **երկրորդ**՝ այդ նրբիմաստները առավել ևս հաշվի առնի զուգաձևերը խոսքում ընտրողաբար կիրառելիս: Այդ ձևերի գործածության վիճակագրությունը, ինչպես կտեսնենք ստորև, ձևերի ընտրությունը այդպիսի իմաստային զանազանությամբ պայմանավորելու հիմքեր չի տալիս: Այդ է վկայում թեկուզ ձևերից մեկի խիստ սակավ կիրառությունը: Ա. Մարգարյանը սովորական է համարում եղանակիչի ժխտումով կազմությունները՝ **չպիտի // չպետք է գրեմ, չպիտի // չպետք է գրենք, չպիտի // չպետք է գրեի** ևն: Սակայն կանոնական է նկատում նաև բայաձևի վրա դրվող կազմությունները՝ **պիտի // պետք է չգրեմ, պիտի // պետք է չգրենք, պիտի // պետք է չգրեի**

¹ Տե՛ս «Ժամանակակից հայերեն. խոսակցական լեզու», Երևան, 1981, էջ 99:

² **Բարսեղյան Հ.**, նշվ. աշխ., էջ 317:

³ Նույն տեղում:

նն¹: Մ. Ասատրյանը նույնպես գրական լեզվի նորմի սահմաններում է դիտարկում այդ կազմությունները՝ առավել գործածական և տարածված նկատելով առաջինները՝ եղանակիչի ժխտումով ձևերը՝ **չպիտի // չպետք է գրեմ, չպիտի // չպետք է գրեի**²: Ուսումնասիրողներից Ջ. Աղաջանյանը գրեթե նույն կարծիքին է. բայաձևի ժխտումով ձևերը նա համարում է ոչ հանձնարարելի կազմություն և վերագրում է առավելապես խոսակցական լեզվին: Հետաքրքիր է հետազոտողի այն դիտարկումը, որ ի վերջո լեզվի զարգացման ընթացքում հնարավոր է, որ դրանց միջև առկա նրբիմաստային տարբերության (նկատի ունի է. Աղայանի դիտարկումը) զարգացումը «ժամանակի ընթացքում իմաստային օտարման պատճառ դառնա», կամ էլ ձևերից մեկը դուրս մղվի լեզվից³: Հայոց լեզվի ակադեմիական հրատարակության հեղինակներն ընդունելի և կանոնական են համարում միայն եղանակիչի՝ չ մասնիկով կազմությունները. «Այս ժամանակի ժխտական ձևերը կազմվում են **պիտի** կամ **պետք է** եղանակիչին ավելացնելով չ ժխտական մասնիկը (**չպիտի վազեի, չպետք է գնայի**)»⁴: Մյուս կազմությունը (**չ + բայաձև՝ պիտի չվազեի, պետք է չգնայի**) չի քննարկվում:

Արևակ-ի տվյալները երևան են հանում շատ հետաքրքիր պատկեր: Նախ՝ ինչպես ասել էինք, **պիտի** և **պետք է** եղանակիչների գործածության հարաբերակցությունը խիստ տարբեր է. **պետք է**-ի գործածությունը էապես զիջում է **պիտի**-ին, առանձին համատեքստերում՝ նույնիսկ մի քանի տասնյակ անգամներ, այսպես՝ **պիտի գնա՝ 387/249 – պետք է գնա՝ 3/3; պիտի հասկանա՝ 85/79 – պետք է հասկանա՝ 0/0; պիտի մոռանա՝ 14/14 – պետք է մոռանա՝ 0/0; պիտի մտածի՝ 95/85 – պետք է մտածի՝ 0/0** նն: Նույնը վերաբերում է նաև ժխտական խոնարհմանը՝ **չպիտի մտածի՝ 13/13 – չպետք է մտածի՝ 0/0; չպիտի հասկանա՝ 2/2 – չպետք է հասկանա՝ 0/0**; նն: Մա նշանակում է, որ եղանակիչ համարվող **պետք է** բառը տակավին մեծ չափով պահպանում է իր նյութական իմաստը և որպես քերականական ցուցիչ դժվարությամբ է ընկալվում ու կիրառվում եղանակի քերականական իմաստ արտահայտելիս: Բիարկե, չպետք է մոռանալ, սակայն, որ ըստ գործածման ոլորտների՝ այս հարաբերակցությունը կարող է էապես փոխվել: Օրինակ՝ իրավաբանական տեքստերում կամ առհասարակ պաշտոնական խոսքում և կամ գիտական գրականության մեջ անհամեմատ ակտիվ կիրառություն ունի, իսկ երբեմն էլ բացառապես կիրառվում է **պետք է** եղանակիչը⁵: Բայց սա առանձին քննարկման առարկա է:

¹ Մարգարյան Ա., նշվ. աշխ., էջ 484:

² Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, էջ 352-353:

³ Տե՛ս Աղաջանյան Ջ., նշվ. աշխ., էջ 304-305:

⁴ Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզու», հ. 2, Երևան, 1974, էջ 406:

⁵ Այսպես, օրինակ՝ «Պետություն և իրավունք» ԵՊՀ գիտական հանդեսի մեկ համարի առաջին երեք հոդվածներում հարկադրական եղանակի 17 կիրառություններից և ոչ մեկը

Ինչ վերաբերում է բուն ժխտական խոնարհման կազմությանը՝ **պիտի** եղանակիչի մասնակցությամբ, ապա պետք է ասել, որ անվերապահորեն գերակշռում են ժխտական եղանակիչով կառույցները, այսպես՝ *մտածել* – **չպիտի մտածի**՝ 95/85 – **պիտի չմտածի**՝ 1/1; *գալ* – **չպիտի գա**՝ 25/23 – **պիտի չգա**՝ 1/1; *նայել* – **չպիտի նայի**՝ 4/4 – **պիտի չնայի**՝ 0/0; *թողնել* – **չպիտի թողնի**՝ 10/9 – **պիտի չթողնի**՝ 1/1; *մոռանալ* – **չպիտի մոռանա**՝ 25/25 – **պիտի չմոռանա**՝ 1/1; *մնալ* – **չպիտի մնա**՝ 66/53 – **պիտի չմնա**՝ 4/4; *հասկանալ* – **չպիտի հասկանա**՝ 2/2 – **պիտի չհասկանա**՝ 1/1 ևն: Ի դեպ, դժվար չէ նկատել, որ բերված օրինակները տարբեր կազմության բայերով են: Փաստորեն պատկերը նույնն է բոլոր բայերի դեպքում: Ահա նաև բնագրային օրինակներ՝ «Մարդ շատ **չպիտի կարդա**, որ ինքը մնա ինքը» (Ռ. Ջարյան); «Երբ ծաղրում էին, թե ինչին է պետք սովորելը, հո գերեզմանում **չպիտի կարդա...**» (Ստ. Ջորյան); «Նրա մուտքը ոչ ոք **չպիտի տեսնի**» (Վ. Փափազյան); «Եթե բանվորը իր հայրենիքը **չպիտի ունենա**, իր ազատ երկիրը **պիտի չտեսնի**» (Ստ. Ալաջաջյան); «...եթե ամեն օր **չպիտի տեսնի** Արևհաստին» (Ջ. Խալափյան) ևն:

Յուրի Ավետիսյան – Տեղաշարժեր արդի գրական արևելահայերենի ժխտական խոնարհման մի քանի կազմություններում

Քննարկվող երեք ժամանակաձևերի (**հարակատար + չէ/չի + հարակատար; մի՛ գրեք/մի՛ գրեցեք; չպիտի գրի/պիտի չգրի**) տարբերակային ձևերի գոյության և գործածության վերաբերյալ տարակարծությունները հանգում են այս կամ այն ձևին նախապատվություն տալուն կամ տարբերակներից մեկի ընտրությանը: Կատարած ուսումնասիրությունը, որը մեծ մասամբ հիմնված է գրավոր և բանավոր խոսքում նշված ձևերի կենդանի գործածության վիճակագրության վրա (ըստ **Արևակ**-ի տվյալների), «հանգում է» հետևյալ եզրակացության. **ա**) ժամանակակից գրական արևելահայերենում **հարակատար + եմ** կառույցի ժխտական խոնարհման հարացուցում օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի նախադաս կիրառությունը՝ հնչյունափոխված ձևով (**չի + հարակատար**), պետք է ընդունել որպես կանոնական տարբերակ՝ ընդունված կանոնավոր ձևին (**հարակատար + չէ**) զուգահեռ: **բ**) ժամանակակից հայերենի արգելական հրամայականի հոգնակի թվի հարացուցում քննարկվող տարբերակները (**մի՛ գրեք/մի՛ գրեցեք**) պետք է ամրագրվեն որպես տարբերակային ձևեր. իհարկե, հանձնարարելի և նախընտրելի պիտի համարվեն ներկայի հիմքով կազմությունները: **գ**) Հարկադրական եղանակի՝ **պիտի** և **պետք է** եղանակիչներով կառույցներում (որտեղ անհամեմատ ակտիվ գործածություն ունեն **պիտի**-ով ձևերը) անվերապահորեն գերիշխող են ժխտական եղանակիչով (**չպիտի գնա, չպիտի խոսի, չպիտի երգի**) և ոչ թե ժխտական բայաձևով (**պիտի չգնա, պիտի չխոսի, պիտի չերգի**) կազմությունները: Հետևապես կանոնական համարելով

կազմված չէ **պիտի** եղանակիչով. գործածված է միայն **պետք է**-ն («**պետք է** ծանուցի», «**պետք է** լրացուցիչ որակվեր», «**պետք է** ուղարկվի նոր քննության», «**պետք է** առաջնային հարց լինի» ևն: Տե՛ս «Պետություն և իրավունք», 2015, թիվ 1, էջ 6-34:

տարբերակային երկու ձևերն էլ՝ նախապատվությունը պետք է տալ ժխտական եղանակիչով տարբերակին:

Юрий Аветисян – Сдвиги в отрицательном сочетании некоторых форм восточноармянского литературного языка

Ключевые слова – отрицательное спряжение, причастие, повелительное наклонение, множественное число, спряжение «Է», простые глаголы, компульсивное наклонение, модальные глаголы «պիտի» и «պետք է», отрицательная частица «չ», регулирование, статистика, присваиваемый, вариант

Разногласия по поводу существования и использования различных форм трех рассматриваемых времен (причастие + չէ//չի + причастие; մի՛ գրեք//մի՛ գրեցեք; չպիտի գրի//պիտի չգրի) приводят к тому, что предпочтение отдается той или иной форме или выбирается один из вариантов. Исследование, которое во многом основывается на статистике живого использования упомянутых форм в письменно-устной речи (согласно данным Արևակ) «приходит» к следующему выводу: а) в современном восточноармянском языке третье лицо единственного числа парадигмы (причастие + էս) также может быть выражено (չի + причастие) вспомогательным элементом, предшествующим причастию, это должно быть принято как канонический вариант и параллельно использоваться с регулярной парадигмой (причастие + չէ); б) варианты (մի՛ գրեք // մի՛ գրեցեք), обсуждаемые в парадигме множественного числа современного армянского запретительного императива, должны быть зафиксированы как возможные; конечно, формы настоящего времени следует рассматривать как предпочтительные варианты; в) в компульсивном наклонении модальные глаголы (պիտի и պետք է) в структурах, где формы с «պիտի» имеют несравнимо активное использование, безусловно, преобладают с отрицательной формой (չպիտի գնա, չպիտի խոսի, չպիտի երգի), а не с отрицательными глагольными образованиями (պիտի չգնա, պիտի չխոսի, պիտի չերգի).

Yuri Avetisyan – Shifts in the Negative Conjugation of Some Forms of the Literary Eastern Armenian Language

Key Words – negative conjugation, participle, imperative mood, plural, “Է” conjugation, simple verbs, compulsive mood, պիտի and պետք է modal verbs, “չ” negative particle, regulation, statistics, preferable, option

Disagreements over the existence and use of different forms of the three tenses in question (հարակատար + չէ // չի + հարակատար; մի՛ գրեք // մի՛ գրեցեք; չպիտի գրի // պիտի չգրի) lead to a preference for one or the other form, or one of the options is selected. Research, which is largely based on the statistics of the use of the mentioned forms in written and oral speech (according to the data of Արևակ), “comes” to the following conclusions: а) in the modern Eastern Armenian language the third person singular of the (participle + էս) paradigm can also be expressed by (չի + participle) with the auxiliary preceding the participle, and the latter should be accepted as a canonical variant, and parallelly used with the regular (participle + չէ) paradigm; б) the versions (մի՛ գրեք//մի՛ գրեցեք) discussed in the plural paradigm of the modern Armenian prohibitive imperative should be fixed as optional; of

course, the present tense formations should be considered as preferred options; c) in the compulsive mood, in structures with modals «**պիտի** and **պետք է**», where the forms with «**պիտի**» have an incomparably active use, unconditionally prevail with the negative modal (**չպիտի գնա, չպիտի խոսի, չպիտի երգի**) and not with the negative verb formations (**պիտի չգնա, պիտի չխոսի, պիտի չերգի**). Therefore, considering both optional canons as normal, preference should be given to the version with a negative modal.

Յուրի Ավետիսյան – ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (yuriavetisna@ysu.am)

Ներկայացվել է 27.08.2021

Գրախոսվել է 25.08.2021

Ընդունվել է տպագրության 30.11.2021